# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

0004, Երևան, Ծովակալ Իսակովի պող. 29 Հեռ.՝ 77 81 22

N 21/1-447 «13» 03 2015

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքներ (գնման հայտը կցվում է):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ՀՀ ՈԿ-ՇՀԱՊՁԲ-(11/3)-15/8»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Իսակովի 29, «գնումների խումբ» աշխատասենյակ հասցեով, Ս. Մկրտչյանին (հեռ. 010 77-49-76), մինչև 2014թ. մարտի 25-ը, ժամը 14:00-ը:

Հայտերը կբացվեն ք. Երևան, Իսակովի 29, «գնումների խումբ» աշխատասենյակ հասցեում, 2014թ. մարտի 25-ի, ժամը 14:00-ին:

Գնման առարկա է «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերումը, որոնք կազմված են 32 չափաբաժիններից:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում "Շրջանակային համաձայնագրեր" բաժնի "հրավերներում կատարված փոփոխություններ" ենթաբաժնում):

Սույն ծանուցմանը կցված գնման հայտում նշված ապրանքների այն չափաբաժինների գծով, որոնցով սահմանված են ապրանքների ֆիրմային անվանումները, գնային առաջարկ ներկայացնելու դեպքում, մասնակիցները գնային առաջարկով համարժեք ապրանք առաջարկելու դեպքում ներկայացնում են նաև առաջակվող ապրանքի ֆիրմային անվանումը և համառոտ տեխնիկական բնութագրերը:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

**ՊԵՏ,**
**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ** **ՀՈՎՀ. ՎԱՐՅԱՆ**